ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գործունեության արդյունքային ցուցանիշների համալրման և 2022- 23 ուստարվա գործունեության արդյունքների

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

/Գիտական խորհրդի նիստ՝ 09.12.23թ. /

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի Մասնաճյուղի 2018-2023թթ. գործունեության արդյունքային ցուցանիշների (ԳԱՑ) լրակազմը ներկայացնում է վերջին 5 տարիների Մասնաճյուղի գրանցած արդյունքները և դրանց դինամիկան, և փաստում է մասնաճյուղի ձեռքբերումների, նաև խնդիրների մասին: ԳԱՑ-ում յուրաքանչյուր ցուցանիշի համար գրված է վերլուծություն, որում հնարավորինս ներկայացված են ձեռքբերված արդյունքները, նրանց հիմնավորումները, իսկ խնդիրների դեպքում՝ պատճառները:

Վերջին 2 տարիների ԳԱՑ-երի (ԳԱՑ 2017-2022 և ԳԱՑ 2018-23) լրակազմը տարբերվում է նախորդ ԳԱՑ-երից, որովհետև Մասնագիտական կրթության որակի ապահովման (ՄԿՈԱ) բաժինը այն վերանայել է ըստ Մասնաճյուղի 2022-26թթ. զարգացման ռազմավարական ծրագրի կատարողականի գնահատման պահանջների և մասնաճյուղի նախանշած ձեռքբերումները մանրամասն ներկայացնելու համար վերանայվել և նոր արդյունքներով համալրվել են գործունեության **բոլոր 6 ոլորտները** (Ընդունելություն և համակազմ, Ուսումնական գործընթաց, Ռեսուրսներ և կառավարում, Ենթակառուցվածքներ, Գիտություն և նորարարություն, Արտաքին կապեր և միջազգային համագործակցություն). ավելացվել են **4** նոր **ցուցանիշներ** (4.11, 6.1.1, 6.1.2, 6.5) և **35 նոր արդյունքներ**:

ԳԱՑ-ում ավելացվել են նաև **2 նոր ոլորտներ** (որակի կառավարում, հասարակական պատասխանատվություն)՝ **6 ցուցանիշներով** և **24 արդյունքներով**:

Ներառված նոր արդյունքներից շատերի համար 2021-2022 և 2022-2023 ուստարիների համար մասնաճյուղը ձեռք է բերել որոշակի արդյունքներ:

Ներկայացնենք 2022-23 ուստարվա գործունեության ընթացքում Մասնաճյուղի ձեռք բերած **հիմնական արդյունքներն ըստ բնագավառների:**

Բնագավառ 1. Ընդունելության արդյունքների և ուսանողական համակազմի վերաբերյալ մասնաճյուղի ձեռքբերումները և խնդիրները.

1. 2022թ.-ի **ընդունելության արդյունքները** Մասնաճյուղի համար ընդհանուր առմամբ եղել են գոհացուցիչ: Ընդունելության քննություններին մասնակցելու համար հայտ ներկայացրած **դիմորդների թիվը** նախորդ տարիների համեմատ ավելացել է, միայն առկա ուսուցման դիմորդների թիվը նախորդ տարվա ցուցանիշը գերազանցել է 21-ով: Առկա ուսուցման բակալավրիատ դիմած դիմորդների թիվն **ավելացել է** հիմնականում հումանիտար և տնտեսագիտական ուղղությամբ կրթական ծրագրերի համար, իսկ բնագիտական ուղղությամբ հաշվետու տարում դիմորդների թիվն էապես **նվազել է** (28 դիմորդ նախորդի 41-ի դիմաց), որը պայմանավորված է ընդունելության առարկաների կազմի փոփոխությամբ (ԻԿՄ-ի համար՝ մաթեմատիկա և ֆիզիկա կամ անգլերեն, Ֆինանսների համար՝ մաթեմատիկա կամ հայոց լեզու), որի արդյունքում դիմորդների մի մասը ընտրել են ֆինանսներ ծրագիրը: Նվազել է նաև հեռակա բակալավրիատ դիմած դիմորդների թիվը (121/135):

Նշենք, որ ընդունելության շեմը հաղթահարած դիմորդների թիվը առանձնապես գոհացուցիչ չէ և առկա և հեռակա ուսուցման համակարգերի համար: Առկա բակալավրիատ ընդունվել է դիմորդների **70.3%-ը՝** (263-ից 185-ը, նախորդ տարի ցուցանիշը եղել է **79.3%),**

հեռակա բակալավրատ ընդունվել է դիմորդների **37.2%-ը** (45/113, նախորդ տարի՝ **83.7%): /Ց 1.4, 1.5, 1.6, 1.7/**





2. Նշենք, որ ուսանողական համակազմը (2022-23 ուստարում՝ 1145) վերջին տարիներին անընդհատ նվազում է, ինչը հիմնականում պայմանավորված է հեռակա ուսուցման ընդունելության ծավալների նվազմամբ և 3 կրթական ծրագրերով ընդունելություն չկազմակերպելու հանգամանքով: Բայց պետք է փաստել, որ առկա ուսուցման ուսանողների թիվն ավելացել է, ինչը պայմանավորված է հումանիտար գիտությունների ֆակուլտետում նոր 2 կրթական ծրագիր ներդնելու, որոշ կրթական ծրագրերի շրջանակներում դիմորդների՝ արդյունքում ընդունվածների թվի ավելացմամբ: 2022-23 ուստարում վերջին 5 տարիների կտրվածքով առկա ուսուցման ուսանողների թիվը **(636)** գերազանցել է (141-ով) հեռակա ուսուցման ուսանողների թվին: **/Ց 1.11, 1.13/**





3. Պետք է նշել, որ վերջին տարիներին Մասնաճյուղի հեռակա ուսուցման համակարգ են դիմում նաև ՄՄՈՒՀ-երի բարձր առաջադիմությամբ շրջանավարտները, 2022թ.-ին ընդունվել են 31-ը: **/Ց 1.15/**

Այս բնագավառում մասնաճյուղը խնդիր ունի օտարերկրյա դիմորդների և արդյունքում ուսանողներ ունենալու հետ:

<u>Բնագավառ 2. Ուսումնական գործընթացի հետ կապված ձեռքբերումներն ու խնդիրները.</u>

4. 2022-2023 ուստարում բակալավրիատի **<u>ամփոփիչ ատեստավորմանը</u>** մասնակցել է **220** ուսանող (129-ը՝ առկա ուսուցման համակարգում և 91-ը՝ հեռակա ուսուցման համակարգում) և մագիստրատուրայի՝ 12 ուսանող: Ի տարբերություն նախորդ տարվա հաշվետու ուստարում բոլոր շրջանավարտները հաղթահարել են ամփոփիչ ատեստավորումը:



Եվ այստեղ տեսանելի արդյունք է գրանցվել շրջանավարտների ՄՈԳ-ի ցուցանիշում. 232 շրջանավարտներից 97-ի (**41,8%, նախորդ ուստարում՝ 13.8%)** ՄՈԳ-ը եղել է 18-20 միավոր: **/Ց 2.2/**



5. Հիմնական դասախոսական կազմը վերջին 3 ուստարիների համար կայուն է՝ 84-ից 90: 2022-23 ուստարվա հիմնական դասախոսական կազմի **53.6%-ը** (84-ից 45-ը) գիտական աստիճանով են: 2022-23 ուստարում միայն մասնաճյուղում աշխատող հիմնական դասախոսները (**66** դասախոս) կազմել են ընդհանուր դասախոսական կազմի **39.5%**-ը: Ընդ որում, նրանց **41%**-ը՝ 27 դասախոս, գիտական աստիճանով է: **/Ց 2.3, 2.3.1/**







6. Ավելացել են նաև միայն Մասնաճյուղում աշխատող հիմնական դասախոսական կազմի գիտական գործունեության արդյունքները: 2022-23 ուստարում նրանց կողմից հրատարակվել են 4 ուսումնամեթոդական ձեռնարկներ կամ դասագրքեր, 56 գիտական հոդվածներ (նախորդ ուստարում՝ 42): Ընդորում, 2022թ.-ին 1 դասախոսին ընկնող գիտական հրատարակությունների ցուցանիշը կազմել է **0.91** (նախորդում՝՝ **0.74), այսինքն 66 դասախոս-60 գիտական հրատարակություն**: Այստեղ ակնհայտ է իր ազդեցությունն ունեն գիտական գործունեության համար գործող խրախուսման մեխանիզմները և ներքին դրամաշնորհային ծրագրերի իրականացումը **/Ց 2.13, 5.3/:**



7. 2022-23 ուստարվա համար առաջադիմության ցուցանիշը առկա ուսուցման համար կազմել է **78.2%** (նախորդ ուստարում՝ **71.9%),** հեռակա ուսուցմամբ բակալավրիատում՝ **31.23%,** մագիստրատուրայում՝ **92.6%: /Ց 2.14/**

Ցուցանիշ 2.14	2020/21	2021/22	2022/23
Հումանիտար գիտությունների ֆակուլտետ(%)	77.1	78.88	**89.59**
Բնական գիտությունների ֆակուլտետ (%)	65.3	85.4	**64.53**
Տնտեսագիտության ֆակուլտետ (%)	83.4	52.2	**78.29**
Կիրառական արվեստի ֆակուլտետ (%)	81.3	71.05	**80.23**
Միջին տարեկան ցուցանիշը(%)	**76.8**	**71.9**	**78.2**

8. Հաշվետու ուստարում բարձր ցուցանիշներ են գրանցվել նաև «Դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցման արդյունքներում». 2

կիսամյակների համար ֆակուլտետների միջին գնահատականները եղել են **4.6-ից** բարձր: **/Ց 2.15/**

Ցուցանիշ 2.15	2021/22		2022/23	
	I կիս.	II կիս.	I կիս.	II կիս.
Հումանիտար գիտությունների ֆակուլտետ	4.67	4.57	**4.70**	**4.64**
Բնական գիտությունների ֆակուլտետ	4.57	4.93	**4.48**	**4.66**
Տնտեսագիտական ֆակուլտետ	4.72	3.53	**4.75**	**4.77**
Կիրառական արվեստի ֆակուլտետ	4.56	4.60	**4.63**	**4.64**
Համահամալսարանական ամբիոններ	4.68	5.00	**4.65**	**4.56**

<u>Բնագավառ 3.</u> Ռեսուրսների և ենթակառուցվածքների առումով ունենք հետևյալ արդյունքները

9. 2022թ.-ի մասնաճյուղի **տարեկան բյուջեն** 2021թ. համեմատ նվազել է **11.6%-ով**: Դրա մեջ հիմնականում իր ազդեցությունն ունի պետական բյուջեից հատկացումների ծավալի փոքրացումը, ուսանողների թվի նվազման արդյունքում վճարովի ուսուցման ծառայությունից եկամուտների ծավալի նվազումը (նախորդ տարվա համեմատ նվազել է **6.9%**-ով):

Սակայն նշենք, որ վճարովի ուսուցման ծառայությունից եկամուտների հաշվեկշիռը տարեկան բյուջեում 2022թ.-ին կազմել է **49.7% և ավել է** նախորդ տարվա եկամուտներից (**47.2%**) (որովհետև պետական բյուջեից եկամուտները նվազել են) **/Ց 3.4/**

10. 2022թ.-ին վերջին 5 տարիների արդյունքներում առաջին անգամ մեկ ուսանողին ընկնող ծախսերի ծավալը՝ **463400** դրամ գրեթե հավասար է մեկ ուսանողին ընկնող եկամուտների ծավալին՝ **467100** դրամ: **/Ց 3.5/**

11. 2022թ.-ին 2021թ.-ի համեմատ **8.2%-ով** աճել են նաև ուսումնական ծախսերը, ընդորում նախորդ 4 տարիների համեմատ էապես ավելացել են նաև մեկ ուսանողին ընկնող ուսումնական ծախսերը՝ **227,2 հզ. դրամ**: Նշենք, որ ուսումնական ծախսերը կազմում են մասնաճյուղի ընդհանուր ծախսերի **49%-ը**: Վերջին 2 տարիներին Մասնաճյուղը գումարներ է ծախսել նաև գիտահետազոտական աշխատանքների համար դասախոսական կազմին խրախուսելու համար: **/Ց 3.8/**

12. 2022թ.-ին աշխատավարձի փոփոխություն չի եղել: Նշենք, որ մասնաճյուղի ծախսերի ընդհանուր ծավալում գերակշռում են աշխատանքի վարձատրության և եկամտային հարկի ծախսերը՝ 81-90%, որը 2022թ.-ի համար կազմել է **84%**: **/Ց 3.11, 3.12/**

<u>Բնագավառ 4.</u> Մասնաճյուղի ենթակառուցվածքները

13. Մասնաճյուղի լսարանային ֆոնդը 2021-22 ուստարվա համար ավելացել էր 1-ով (բնական գիտությունների ֆակուլտետում մասնագիտական լաբորատորիայի բացման հաշվին): **/Ց 4.3/**

14. Մասնաճյուղի գրադարանում ուսանողներին հասանելի գրականության թիվը 2022-23 ուստարում կազմել է **20805**, այդ թվում 1068-ը էլեկտրոնայի գրքերն են, 12691-ը՝ գիտական գրականություն է: **/Ց 4.4/**

2022թ.-ին նախորդ տարիների համեմատ էապես աճել է գրականության ձեռքբերման ծախսերը և կազմել է **846000 դրամ**, որը նախորդ տարվա համեմատ ավելացել է **225000 դրամով,** ինչի արդյունքում, նաև ուսանողների թվի նվազման արդյունքում բավականին մեծացել է մեկ ուսանողին ընկնող գրականության ձեռքբերման տարեկան ծախսը և 2022թ.-ին կազմել է **740** դրամ: **/Ց 4.5/**





15. Նշենք, որ նախորդ 2021թ.-ի համեմատ 2022թ.-ին նվազել է տարեկան ձեռքբերված սարքավորումների արժեքը: **/Ց 4.8/**

16. 2022-23 ուստարում մասնաճյուղում իրականացվել են ուսումնական և վարչական տարածների արդիականացման, մասնաշենքերի վերանորոգման, օժանդակ տարածքների արդյունավետ օգտագործման և լսարանների արդիականացման 43 ծրագրեր (նախորդ ուստարում՝ 45): 2022-23 ուստարում արդիականացվել է 19 լսարան, որը կազմում է ընդհանուր լսարանային ֆոնդի շուրջ 34%-ը: **/Ց 4.11/**

Նշենք, որ 2022թ.-ին նախորդ տարվա համեմատ ավելացել է էներգիայի տարեկան ծախսը (խստաշունչ և երկարաձգված ձմեռվա պատճառով), ջրամատակարարման և ջրահեռացման ծախսը: **/Ց 4.9, 4.10/**

<u>Բնագավառ 5</u>. Գիտություն և նորարարություն

17. Վերջին 3 ուստարիներին բարձրացել է հետազոտական նախագծերում ընդգրկված դասախոսների թիվը՝ պայմանավորված է 2021թ.-ից ԵՊՀ ԻՄ-ում գիտահետազոտական ներքին դրամաշնորհային մրցույթներ կազմակերպելու գործընթացով: 2022 թվականին իրականացվել են 5 ներքին դրամաշնորհային ծրագրեր, որոնցում ընդգրկված են եղել 12 դասախոս (3-ը՝ երիտասարդ) և 5 ուսանող:

Ներքին դրամաշնորհային ծրագրերի իրականացման արդյունքում արդեն ունեն արդյունք նաև հետազոտական աշխատանքներում օգտագործվող համակարգիչների թվում՝ **5** և գիտության համակարգի համար նախատեսված ինտերնետային կապի կետերի թվում՝ **5**: **/Ց 5.1, 5.5, 5.6/**

18. 2022-23 ուստարում ԵՊՀ ԻՄ–ում կազմկերպված «Սոցիալ-մանկավարժական նորարարությունները կրթության մեջ» միջազգային գիտագործնական 2 համաժողովներով պայմանավորված արդեն ունենք արդյունք նաև արտաքին գործընկերների հետ համատեղ հրատարակությունների ցուցանիշում՝ **9**: **/Ց 5.4/**

<u>Բնագավառ 6</u>. Արտաքին կապեր և միջազգային համագործակցություն

19. Ուսումնական և մասնագիտական պրակտիկաների կազմակերպման համար մասնաճյուղը 2022/2023 ուստարվա ընթացքում ունեցել է 32 պայմանագիր:

Բուհ-դպրոց համագործակցության շրջանակներում 2022-23 ուստարում իրականացվել են 59 ծրագրեր և միջոցառումներ (առարկայական օլիմպիադաներ, բաց դռների օրեր, ճանաչողական այցեր, դասախոսություններ, ինտելեկտուալ խաղեր): **/Ց 6.4/**

20. Միջազգային համագործակցության շրջանակներում 2022-23 ուստարում օտարերկրյա համալսարանների հետ կնքվել է 6 պայմանագիր: **/Ց 6.5/**

<u>Բնագավառներ 7,8</u>. Որակի ներքին ապահովում և հասարակական պատասխանատվություն 2 նոր բնագավառներում գրանցվել են հետևյալ արդյունքները.

21. 2021-22 ուստարում Մասնաճյուղում առաջին անգամ գործարկվել է կրթական ծրագրերի մոնիթորինգի և վերանայման կարգը: Եվ 2 ուստարվա ընթացքում Մասնաճյուղի բակալավրի 20 և մագիստրոսի 1 կրթական ծրագրերից մշտադիտարկում են անցել բակալավրի 7 կրթական ծրագրեր (3-ը հաշվետու ուստարում): /**Ց 7.1**/

Ցուցանիշը ներառում է նաև ծրագրային հավատարմագրում անցած կրթական ծրագրերի թիվը, ՀՀ այլ բուհերի հետ համատեղ իրականացվող կրթական ծրագրերի թիվը, մասնագիտական և միջգիտակարգային գիտելիքներն ու կարողությունները ձևավորող առաջադրանքների շտեմարանների թիվը, մասնագիտական առաջընթացի գնահատման առաջադրանքների շտեմարանների թիվը, որոնց համար առայժմ արդյունքներ չունենք:

22. 2022-23 ուստարում մասնաճյուղի 1 դասախոս ներգրավված է եղել շարժունության ծրագրերում: /**Ց 7.2**/

23. Արդյունքներ ունենք գրանցած նաև կրթական ծրագրերի որակից ներքին և արտաքին շահակիցների բավարարվածության գնահատման ցուցանիշում /**Ց 7.3**/: Ցուցանիշում նշված գործընթացները մասնաճյուղում իրականացվել են նաև նախկինում, սակայն ցուցանիշը ԳԱՑ-ում ավելացվել է 2022թ.-ից և արդեն լրացվում է: Դիտարկվող արդյունքները հնարավորություն կտան գնահատել առաջընթացը և պլանավորել գործունեությունը:

Ցուցանիշ 7.3. Ներքին և արտաքին շահակիցների բավարարվածություն	**2021/22**	**2022/23**
Շրջանավարտների բավարարվածությունը ստացած կրթությունից	4.5	**4.4**
Արտաքին շահակիցների բավարարվածությունը շրջանավարտներից	4.0	**4.0**
Ուսանողների բավարարվածությունը պրակտիկաների իրականացումից		**4.7**
Արտաքին շահակիցների բավարարվածությունը պրակտիկանտ ուսանողներից		**4.5**
Ուսանողների բավարարվածությունը արտալսարանային աշխատանքներից		**83.3%**

24. 2022-23 ուստարվա ընթացքում Մասնաճյուղը ոլորտային կազմակերպությունների հետ կնքել է 6 հուշագիր, գործատուների հետ՝ 30 պայմանագիր, բուհերի և գիտահետազոտական ինստիտուտների հետ՝ 14 պայմանագիր: /**Ց 8.1**/

Ցուցանիշ 8.1. Համագործակցություն	**2021/22**	**2022/23**
Ոլորտային կազմակերպությունների հետ կնքված հուշագրերի քանակը	4	**6**
Գործատուների հետ կնքված պայմանագրերի քանակը	22	**30**
Մագիստրոսական ծրագիր իրականացնող գիտահետազոտական ինստիտուտի հետ կնքած համագործակցության հուշագրերի քանակ		
Բուհերի և գիտահետազոտական ինստիտուտների հետ կնքված համագործակցության պայմանագրերի քանակը	11	**14**

Վերջում նշեմ 2 կարևոր խնդիրներ, որոնք իրենց ազդեցությունն են ունենում մի շարք այլ արդյունքների վրա:

1. Վերջին տարիներին **<u>նվազում է</u>** մասնաճյուղի ուսանողական համակազմը (2022-23 ուստարում՝ 1145 ուսանող), որում իր ազդեցությունն ունի հեռակա ուսուցման համակարգի ուսանողների թվի նվազումը, նաև մի քանի կրթական ծրագրերով վերջին տարիներին ընդունելություն չկազմակերպվելը (ԻԿՄ, ԲԲ, ՔԿԳ):

2. Ուսանողական համակազմի նվազման արդյունքում նվազել է վճարովի ուսուցման համակարգում սովորող ուսանողների թիվը, հետևաբար նաև վճարովի ուսուցման ծառայությունից ստացվող եկամուտները: Այն 2022թ.-ին կազմել է մասնաճյուղի արտաբյուջետային միջոցների ընդհանուր ծավալի **76.7%-ը**, ինչը ցածր է նախորդ 4 տարիների արդյունքներից (նախորդ տարիներին՝ 80.6, 79.0, 87, 89.3):

Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժին